

## Զապել Եսայան-140

Գրական-հասարակական առումով աշխույժ ու եռանդալից կյանքով ապրեց սովետահայ արձակագիր, մշակութային գործիչ, ֆրանսերենից-հայերեն և հայերենից-ֆրանսերեն գեղարվեստական ստեղծագործությունների թարգմանիչ Զապել Եսայանը: Քիչ ապրեց Զապել Եսայանը. Քիչ ավելի, քան վաթսուն տարի: Սակայն նրա ստեղծած գրական ժառանգությունը, որն ավելի է տաս-տասներկու հատորից, իր լավագույն մասով արդեն ապահովել է իր տեղը հայ գրականության ոսկե ֆոնդում, դառնալով նրա անկապտելի սեփականությունը: Ականավոր գրող, հասարակական քաղաքական գործիչ Զապել Եսայանի ծննդյան 140-ամյակին նվիրված միջոցառում Հայաստանի ազգային գրադարանում:

